# Ի գիտություն հասարակությանը

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, նպատակ ունենալով տեղեկացնել հանրությանը հանձնաժողովի 2023 թվականի աշխատանքային ծրագրով 4-րդ եռամսյակում նախատեսված աշխատանքների մասին, ստորև ներկայացնում է այդ աշխատանքների հակիրճ բովանդակությունը:

*ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2023 թվականի աշխատանքային ծրագրով 4-րդ եռամսյակի ընթացքում նախատեսվում է՝*

- Վերանայել սպառողի էներգատեղակայանքներով էլեկտրական էներգիան ենթասպառողների կամ բաշխողի այլ ցանցերի սնման համար փոխանցելու կարգով ամրագրված դրամային մեծությունները,
- Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի կանոնների համաձայն՝ հաստատել էլեկտրակայանների պայմանագրային և տնօրինելի էլեկտրական հզորությունները,
- Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի կանոնների համաձայն՝ հաստատել սակագնային կարգավորման ենթակա արտադրողների կողմից ուղիղ պայմանագրերի շուկայի կարգավորվող բաղադրիչում պարտադիր վաճառքի ենթակա էլեկտրական էներգիայի չափաքանակները,
- Վերանայել էլեկտրաէներգետիկական համակարգի սակագնային կարգավորման ենթակա խոշոր արտադրող կայանների և ծառայություններ մատուցող ընկերությունների սակագները,
- Լրամշակել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 6-ի №308Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրաէներգետիկական և ջերմամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց կողմից հանձնաժողով լիցենզավորված

գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվության ներկայացման կարգը,

- Հանրային կազմակերպությունների կողմից գնումների առանձին գործարքների արդյունավերության ուսումնասիրության և գնումների կարգերի լրացուցիչ պահանջներին համապատասխանության գնահատման նպատակով՝ իրականացնել վերջիններիս 2023 թվականի գնումների առանձին գործարքների ընտրանքային մոնիթորինգ, որը ներառում է հանրային կազմակերպությունների կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրությունների, գործարքների համար կիրառվող գնման մեթոդների ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարների ընտրության ընթացակարգերի մոնիթորինգը,
- Լրամշակել խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները,
- Վերանայել և լրամշակել խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման (մատակարար-բնակիչ բաժանորդ) և խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման (մատակարար-ոչ բնակիչ բաժանորդ) պայմանագրերի օրինակելի ձևերը,
- Իրականացնել «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների հաշվարկներում ներառվող մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալների մոնիթորինգ,
- Իրականացնել «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից հանձնաժողով ներկայացվող՝ նոր միացման գործընթացի վերաբերյալ տեղեկատվության հավաստիության մոնիթորինգ,
- Վերանայել «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագները,
- «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից համաձայնեցնել իր սպասարկման տարածքի հրապարակվելիք ջրամատակարարման գրաֆիկը հանձնաժողովի հետ,

- Հրապարակել հանձնաժողովի գործառույթների շրջանակում ներգրավված դատական գործերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը,
- «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքի պահանջներին համապատասխան՝ հաստատել հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2024 թվականի անվանական կազմը և հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերը,
- Լրամշակել հանրային ամրակցված հեռախոսացանցի շահագործման մեջ գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորների կողմից այլ օպերատորներին հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման կանոնները և վարձակալության վճարները,
- Հաստատել հանձնաժողովի 2024 թվականի տարեկան աշխատանքային ծրագիրը, որտեղ ըստ ժամանակացույցի կարտացոլվեն հանձնաժողովի գործունեության ծրագրով նախատեսված կոնկրետ աշխատանքները,
- Եռամսյակային արդյունքներով ամփոփվել և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել՝
  - սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
  - սպառողների դիմում-բողոքների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
  - նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական, գազամատակարարման ցանցին և ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերին միացման եռամսյակային ցուցանիշները,
  - էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները: